

լէր Պարսկաստանի վրայ ու կը դրաւէր Քերման քաղաքը. սակայն այս արշաւանքը չէր ունենար սպասուած արդիւնքը ու չէր հասներ ի՛ր նպատակին, այսինքն՝ դրաւելու Սպահանը, որովհետեւ պարսիկ բանակը՝ առաջնորդուած Լիւֆթ-Ալի ճարպիկ զօրավարէն, չարաչար կերպով պարտութեան կը մատնէր Միր-Մահմուտը, որ ետ քաշուելով կը ստիպուէր առժամապէս կեցնել արշաւանքը ու կարգի դնել իր պարտուած բանակը: Պարսիկները փոխանակ օգտադործելու այս յաղթանակը ու զօրավիգ կանգնելու Լիւֆթ-Ալիին, պալատական դաւադրութեան ու նախանձի հետեւանքով՝ վար կ'առնէին զինք իր զօրավարի պաշտօնէն ու կը բանտարկէին:

1721 թուականին, իբրեւ արձագանք Աղուաններու այդ արշաւանքին, Լեզգիները՝ առաջնորդուած Դաւութ Բէկէն՝ կրկին վար կ'իջնէին իրենց լեռներէն դէպի Կուր գետի հովիտը, ու կը յարձակէին Շամախի վրայ, որ նոյն ժամանակի ամենափարթամ ու ամենազեղեցիկ քաղաքն էր, ուր բնակչութիւնը բաղկացած էր գըլաւորապէս պարսիկներէ, հայերէ ու ռուս վաճառականներէ. քաղաքը տաններով ու շարունակ կը դիմադրէր Լեզգիներու յարձակումներուն, բայց Լեզգիներու բազմութեան առջեւ կը ստիպուէին տեղի տալ. անոնք 15 Օգոստոսին դրաւելով քաղաքը՝ ամբողջապէս կը կողոպտէին, վաճառականներու անբաւ հարստութիւնը կը դառնար իրենց աւարը, իսկ բնակչութիւնը հաւասարապէս զոհ կ'երթար կոտորածի ու գերութեան: Նոյն տարուան աշնան, Երեւանի ու Գանձակի պարսիկ խմբերը իրարու հետ միանալով, կ'ուղէին վրէժ լուծել Լեզգիներէն. օգնութիւն կը խնդրէին նաեւ Հիւսէյն Շահէն՝ որ չէր կրնար խնդրանքին կատարել, որովհետեւ ինքն ալ դժուարութեան մէջ կը գտնուէր, այն է՝ պատրաստութիւն կը տեսնէր դիմադրելու Աղուաններու նոր արշաւանքին, որոնք կաղմակերպուելով սկսած էին կրկին ասպատակել Պարսկաստանի վրայ: Երեւանի ու Գանձակի երկու պարսիկ խմբերը յոյսերնին դրած իրենց ձեռքին տակ գտնուած զօրքի քանակին վրայ, կու գային բանակել Ռերգա գիւղի մօտ գտնուող Թարթար գետի եզերքը. ու մինչ անոնք՝ վստահ իրենց յաղթութեան վրայ՝ գիշերը կ'անցընէին կերուխումով ու զըւարճութեամբ, Լեզգիները օգտուելով գիշերային մթութենէն՝ առանց նշմարուելու կ'անցնէին գետը ու կը յարձակէին պարսիկ բանակին վրայ, որ յանկարծակիի գալով՝ խուճապահար փախուստի կը դիմէր, հասնելով մինչեւ Պաշենաձոր: Լեզգիները աւարով ու գերիներով կը դառնային Տաղստանի լեռները:

1721ի Օգոստոս 30ին՝ կը պատահէր քաղաքական ու զինուորական այնպիսի յեղաշրջում մը՝ որ անկիւնադարձ մը պիտի կազմէր ու իր աղբեղութիւնը զգացնել պիտի տար յաջորդ տարիներուն պատահելիք անցուղարձերուն վրայ. այդ թուականին՝ Շուէտ յաղթը

ւած Ռուսերէն, կը ստիպուէր Նեշտատի մէջ Ռուսաստանի հետ կնքել խաղաղութեան դաշնադրութիւն:

Պետրոս Մեծ, ազատած հիւսիսային պատերազմի մեծ մտահոգութենէն, իր բոլոր ուշադրութիւնը կը դարձնէր անմիջապէս Կասպից ծովի եզերքը ու Անդրկովկասի մէջ պատահած անցուղարձերուն վրայ, որոնց ուշի ուշով կը հետեւէր, ու նախապատրաստութիւններ կը տեսնէր՝ առաջն առնելու համար այն ոտնձգութիւններուն՝ որով թուրքիա կը փորձէր իր արբանեակներու միջոցով դրաւել Կասպից ծովի եզերքը ու Անդրկովկասը, եւ տէր ըլլալ Պարսկաստանի:

Ռուս-Շուէտական խաղաղութեան դաշնադրութիւնը շատ հաճելի չէր անցներ թուրքիոյ, որովհետեւ լաւատեղեակ էր այն ծրագիրը՝ որ 1711 թուականին սկսեալ Պետերոն ու պատրաստութիւններուն՝ որ 1711 թուականին սկսեալ Պետերոս Մեծ կը կատարէր արշաւելու դէպի Պարսկաստան. թուրքիա մօտէն կը հետեւէր այն շարժումներուն ու անցուղարձերուն՝ որոնք Անդրկովկասի մէջ կը կատարուէին, տեղեակ էր ազատագրական այն քարոզութիւններուն՝ որ Օրբի միջոցով Հայերու եւ Վրացիներու մէջ տեղի կ'ունենային, տեղեակ էր նաեւ այն դիմումներուն՝ զոր անոնք կ'ընէին Մեծն Պետրոսի, զօրավիգ կանգնելու համար իրենց ազատագրական ձեռնարկին. հետեւած էր նաեւ Օրբի դէպի Պարսկաստան կատարած դեսպանութեան:

1722 թուականի դարնան՝ Լեզգիները աւելի շատ բազմութեամբ կրկին կ'իջնէին Տաղստանի իրենց լեռներէն, կ'անցնէին աւերուած Շամախի քովէն, ու կը հասնէին Մուղանի բերրի դաշտը: Լեզգիներու այս արշաւանքին զոհ կ'երթար այդ կողմերը գտնուած շատ մը քաղաքներ ու գիւղեր ու հայ բնակչութիւնը:

Պարսիկ Չարխաճի խանը զլուխ անցած մեծ բանակի մը՝ Լեզգիներու դէմ կ'ելլէր. բանակը դնելով Պարկուշատ գաւառի մէջէն անցնող Արաքս գետի եզերքը: Լեզգիները կը քալէին Չարխաճի բանակին վրայ. խանը հազիւ տեսած այդ կիսավայրենի լեռնցիները, չէր սպասեր բախումի, այլ կը թողուր ու կը փախչէր պատերազմի դաշտէն: Լեզգիները քաջալերուած այդ անարիւն յաղթութենէն, Պարկուշատէն կը դիմէին դէպի հիւսիսակողմը գտնուող Դիզակ գաւառը, որուն բնակչութեան մեծամասնութիւնը հայ էր. ասոնք միառու, որուն բնակչութեան հետ՝ ուժեղ դիմադրութիւն ցոյց կու տացած չիթ Պարսիկներու հետ՝ սակայն իրենք ալ կը ստիպուէին տեղի տալ ինչ Լեզգիներու դէմ. սակայն իրենք ալ կը ստիպուէին տեղի տալ անոնց բազմութեան առջեւ. Դիզակի բնակչութեան այդ յանդգնութիւնը պատժելու համար, երեք օր շարունակ Դիզակի Քիւնթարկուէր քանդումի, աւերի, կոտորածի ու կողոպուտի, եւ գերի կը տարուէին մարդ եւ անասուն:

Լեզգիները Դիզակէն կ'անցնէին Վարանդա, որու Մելիքն էր Բաղր, որ տեսնելով թէ պիտի չկարենար դիմադրել այդ խուճանին,

ընծաներով կը դիմաւորէր արշաւողները ու կ'ազատէր ոչ միայն իր գաւառը կողոպուտէ, կոտորածէ ու գերութենէ, այլ կ'ազատէր նաեւ Դիզակի գերիներէն մաս մը: Լեզգիները Վարանդէն կ'անցնէին խաչէն գաւառը, ուր կը գտնուէր Գանձասարի վանքը. այդ գաւառն ալ 1722ի Ապրիլ 20ին կ'ենթարկուէր Դիզակի բախտին: Խաչէնէն կ'անցնէին Զրաբերդի գաւառը, կողոպուտի նոյն հեռանկարով, սակայն այստեղ կացութիւնը բոլորովին կը փոխուէր. ասոր բնակիչները՝ ամբողջութեամբ հայ, լսած ըլլալով այն՝ ինչ որ պատահած էր Դիզակի ու խաչենի մէջ, ինքնապաշտպանութեան համար կը քաշուէին իրենց անմատչելի լեռները, իսկ ղէնք բռնել կըցող այր մարդիկ կը դիմադրէին թշնամիի յարձակումներուն. Լեզգիներէն շատեր կը սպաննուէին, իսկ մնացածները խուճապահար կը փախչէին, գերիներէն մաս մըն ալ Հայերուն ձեռքը ձգելով: Լեզգիները՝ որ նման դիմադրութեան մը չէին սպասեր, աճապարանքով կը հեռանային Զրաբերդէն, կ'անցնէին Կուր գետէն անդին, իրենց հետ տանելով մնացած գերիներն ու աւարը:

Երբ Լեզգիները կ'իջնէին Տաղստանի իրենց լեռներէն ու կ'արշաւէին Արեւելեան Հայաստանի հիւսիսային գաւառները, ճիշտ նոյն ժամանակներուն Աղուաններու առաջնորդ Միր-Մահմուտն ալ, Քերմանի պարտութենէն ետք, կրկին կազմակերպած իր բանակը՝ կ'արշաւէր Պարսկաստան, եւ դրաւելով գիւղեր ու քաղաքներ՝ կը յառաջանար դէպի Սպահան: Շահ Հիւսէին, գիւղացիներէ կազմուած իր բանակը կը ղրկէր Աղուաններու դէմ: Վճռական ճակատամարտը տեղի կ'ունենար Դիւլարաթի մօտ, 1722 թուականի Փետրուար 26ին: Պարսկական բանակը կը բաղկանար 50.000 զինուորներէ, լաւ զինուած, ունենալով նաեւ 24 թնդանօթ, թուական բաղմութեամբ՝ եռապատիկ քան աղուանները, որոնք զինուած էին միայն թուրերով, նիզակներով ու վահաններով. եւ սակայն, այդ անգէն խուժանին առջեւ պարսիկ բանակը չարաչար կը պարտուէր եւ Հիւսէին Շահը կը քաշուէր ու կը փակուէր Սպահանի ամուր միջնաբերդին մէջ, ուր ինը ամիս դիմադրելէ ետք՝ անձնատուր կ'ըլլար Միր-Մահմուտի, որ զինք գլխատել կու տար ու ինք կը նստէր պարսիկ թագաւորական աթոռին վրայ:

Անդրկովկասի ու Պարսկաստանի մէջ պատահած այս անցուղարձերը շատ յայտի կերպով կը ցուցադրէին այն ծրագիրն ու աճապարանքը՝ զոր Թուրքիա ունէր, այսինքն Ռուսերէն առաջ՝ իր արքանեակներու ձեռքով արջաւելու ու դրաւելու Անդրկովկասն ու Պարսկաստանը:

Պետրոս Մեծ, այլեւս հասած համարելով ժամանակը՝ վերջ դրնելու Թուրքիոյ օրէ օր աճող ոտնձգութիւններուն, կ'որոշէր դործի անցնիլ, քանի որ քաղաքական կացութիւնն ալ իրեն նպաստաւոր էր՝

Շուէտի պատերազմի վերջաւորութեամբ ու իր տարած յաջող յաղթանակով:

1722 թուականի Յունիս 15ին՝ Պետրոս Մեծ արդէն Աստրախան կը գտնուէր. հասած օրն իսկ յայտարարութիւն մը կը հրատարակէր, որուն մէջ կ'ըսէր թէ ինք դէպի հարաւ կ'արշաւէր՝ միակ նըպատակ ունենալով պատժելու Լեզգիները, որոնք Շամախի գրաւումի ժամանակ՝ ջարդած էին ռուս վաճառականները. ու չորս միլիոնի վնաս հասցուցած էին իր հպատակներուն, եւ միւս կողմէ՝ պարսիկ տէրութիւնը ի վիճակի չըլլալով պարտադրելու որ Լեզգիները վնասուց հատուցում ընեն, ինք կ'երթար այդ խնդիրը կարգադրելու:

Պետրոս Մեծի Աստրախան հասնելէն ամիս մը ետք, այսինքն 18 Յունիսին, բանակը հրաման կը ստանար շարժելու դէպի Կասպից ծովի եզերքը, հեծելազօրքը ցամաքով, իսկ հետեւակը՝ նաւերով: Ինը օր ետք՝ նաւերը կը հասնէին Կասպից ծովի եզերքը գտնուող որոշուած նաւահանգիստը ու միանալով ցամաքէն եկող հեծելազօրքին՝ կը յառաջանային. 23 Օգոստոսին, առանց դիմադրութեան մը հանդիպելու՝ կը դրաւէին Դերբենդը, քիչ ետք՝ Բաքուն ու Ռեշտը, բոլոր շրջակայ քաղաքներով ու գիւղերով. այդպիսի արագ արշաւանք մը ու հսկայ բանակ մը մեծ ազդեցութիւն կը դրոծէր շրջակայ բոլոր ազգերուն վրայ ու կը բարձրացնէր Պարսիկներու ենթակայ քրիստոնեաներու վարկն ու բարոյականը:

Սակայն արշաւանքին նպատակը չէր հետապնդուեր. առանց լուրջ դիմադրութեան մը հանդիպելու՝ անակնկալ կերպով, արշաւանքը նախ տեղ քայլ կ'ընէր, ու ապա Պետրոս Մեծի հրահանգով՝ զինուորներէն մաս մը դրաւած երկիրներուն մէջ կը մնար, պաշտպանելու համար քաղաքները, իսկ միւս մնացած մասն ալ Աստրախան կը վերադառնար: Ցարը արդարացնելու համար իր ըրած այս կարգադրութիւնը, պատճառ կը բերէր թէ երկրին կլիման աննպաստ էր զօրքին, եւ թէ այդ տեղերու մէջ դժուար էր այդքան զինուորներու պարենաւորումը: Սակայն, ասոնք երկրորդական պատճառներ էին. Պետրոս Մեծի պէս դիւանագէտ մը աւելի հեռուններ կը տեսնէր: Արշաւանքի առաջին օրերէն իսկ կը նշմարէր որ հորիզոնին վրայ սկսած էին երեւնալ միջազգային բարդութիւններու մութ ամպեր: Թուրքիա, որ մինչեւ նոյն ժամանակ վարագոյրի ետեւ կեցած, կ'ուզէր խամաճիկ խաղցնել, տեսնելով Ռուսերու այդ յաղթական արշաւը՝ կ'ըմբռնէր կացութեան ծանրութիւնը, ու չէր ուզեր այլեւս մութի մէջ մնալ. քաջալերուած Անգլիայէն ու Ֆրանսայէն, կը հրամայէր էրզրումի զինուորական փաշային՝ շուտով պաթրաստութիւններ տեսնելու եւ արագ կերպով շարժելու դէպի հիւսիս. իր այս որոշումը Սուլթանը կը հաղորդէր Պոլսոյ ռուսական ներկայացուցչին, սպանալով որ եթէ Ռուսերը շարունակեն իրենց յառաջխաղաց-

քը, ինք պիտի ստիպուի քալել Կովկասի վրայ. ահա բուն պատճառը թէ ինչո՞ւ Պետրոս Մեծ կը դադրեցնէր իր զինուորական նուաճումները Պարսկաստանի ու Անդրկովկասի մէջ, ու կը դառնար Աստրախան:

Պետրոս Մեծ թէեւ զգուշանալով միջազգային բարդութիւններէ կը դադրեցնէր իր յաղթական արշաւանքը, բայց միւս կողմէ իբրեւ խոհեմ դիւանագէտ յարաբերութեան մէջ կը մտնէր Թուրքիոյ հետ, իրաւական վիճակի վերածելու համար Կասպից ծովի եզերքը դրաւ իր երկիրները. զանազան բանակցութիւններէ ու զիջումներէ յետոյ, 1724 թուականի Յունիս 12ին կը յանգէին համաձայնութեան մը, Պոլսոյ մէջ կնքելով Ռուս-թրքական դաշնագիրը, որու զօրութեամբ՝ Ռուսիոյ կը մնային Կասպից ծովի եզերքի հողերը, իսկ Թուրքիոյ ազատ ասպարէզ կը տրուէր Անդրկովկասի պարսկական հողերու վերայ: Այս դաշնագրութեամբ Հայերն ու Վրացիները կը ձգուէին իրենց բախտին ու ճակատագրին, իսկ ազատագրական շարժումը կ'ընդունէր մահացու հարուած մը*:

(Շար. 2)

Հ. ՍԱՄՈՒԷԼ ԱՐԱՄԵԱՆ

* Մանթաշէն. Առանձին մասով պիտի ներկայացուի օգտագործուած աղբիւրներու ընդարձակ մատենագիտութիւնը, մանրամասն նշումներով եւ յարակից բացատրութիւններով:

ԲՆԱԳԻՐՆԵՐ - ՎԱԿԵՐԱՔՈՒՂԹԵՐ - ԴԻՒԱՆԱԿԱՆ ՆԻԹԵՐ

ԱՌՐԱՀԱՄ ԵՐԵՒԱՆՑԻԻ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԱՑՆ 1721-1736 ԹՈՒԻ»

(Շար. տե՛ս «Բազմավէպ», 1974, ք. 3-4, էջ 278-305)

Ձեռագիր Ս. Ղազարի, ք. 2717

Բնագիր Արքանաւ Երեւանցիի

(ԳԼՈՒԽ Գ.)

6ա

| Օսմանցիին իւր մեծ հզօրօք զալ Երեւանայ վերայ: Եղեւ վարդայ վեր կացաւ մինչ ի Երեւան, Գ [= 3] ալուրն հասաւ Երեւանայ մօտն, մին Սամբէկի Դալմայ կասեն, ջրի վերէն, տեղն նստաւ Արդուլայ փաշէն: Մինչ ի Երեւան կէս ժամէն տեղայ: Երեւանանայ Դ [= 4] կողմի դեղն եւ դավառն բովանդակ փախի եկին մօտին քաղաքն:

Ձեռագիր Ս. Ղազարի, քիւ 2681

Խմբ. (Հ. Մատթէոս Եւդակիացիի)

[ԳԼՈՒԽ Գ.]

Յաղագս պաշարման Երեւանայ եւ պատերազմացն քաղաքացւոց. քէ ո՞յք էին ի Հայոց որք յամենայն սրտէ մարտնչէին յամալարիս արձակաբազմի անդ եւ գործանս կոտորեցին յօսմանցւոց:

Չու արար Արդուլլա փաշայն ի դաշտէ անտի Եղեւ վարդայ, եւ եկն բանակեցաւ ի տեղի մի հանդէպ Երեւանայ՝ Սամբէկի Դալմա անուանեալ յանուանէ ջրմղոյն, որ անդ լեալ է: Եւ որք չուրջ զԵրեւանաւ դտան բնակէ ի դեօղս եւ յաղարակս, ամենեքեան փախուցեալք ի քաղաք անդ մօտին: